

ՆՈՐ ԱՎԵԴԱՔԵՐ

Գ. ՏԱՐԻ

ՀԱՆԼԵՊ, ՓԵՏՐՈՒՍՐ 7, 1930

ԹԻԻ 3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ԽՈՐՀԻՆՔ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ ՏՐ. Ճ. Է. ՄԷՐԻԼ
ԿԵԱՆՔԻ ՇՈՂԵՐ

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

Ս. ԳԻՐՔԸ ԻՔՐ ԿՐԹԻՉ ԱԶԴԱԿ

ՎԵՐ. Կ. Յ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

ՄԵՐ ՄԵԾԱԳՈՅՆ ՊԵՏՔԸ

ՓՐՈՖ. Լ. ԼԵԻՈՆԵԱՆ

ՀԱՅԱՏԱՌ ԹՐՔԵՐԷՆ Ս. ԳԻՐՔԸ

Ֆ. Լ. ՄԷՔԱՂՄ

ՊԱՐԻԿԻՆ ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ՆՈՒԷՐԸ

ՊԱՏ. Կ. ԳԸՐԳԵԱՇԱՐԵԱՆ

ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷԶԸ

NOR AVEDAPER
BOITE POSTALE 287, ALEP, SYRIE

ՏՊԱՐԱՆ «ԳՈՒԼԵՃ» ՀԱՆԼԵՊ

ՀԱԼԷՊԻ ԿՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒՆ

Սիրելի բարեկամներ,

Դպրոցին վարչութեան կողմէ կրնանք ձեզի աւետել թէ դպրոցի գեանին փոխանցման գործողութիւնը շատ դժուարութիւններէ վերջ լմնացած է Յունվ. 11, երեկոյեան ժամը 6.30ին: Գիտինք՝ նախկին անգլիական հիւպատոսարանի բայց ներկայիս Հալէպի Գոլէճի նախապատրաստական բաժնին կից գանձող դաշտն է, 2814 քառակուսի կանգուն տարածութեամբ, որ մեզի արժած է 863.5 օսմ. ոսկիի (մետաղ) իր բոլոր ծախքերով: Հիմա կարգը եկաւ շէնքի շինութեան ձեռնարկելու: Չենք գիտեր թէ ասիկա ինչի՞ պիտի արժէ, և որչա՞փ ժամանակ պիտի պահանջէ: Բնականաբար Աստուծոյ առաջնորդութեան և մարդոց աջակցութեան կը կարօտինք:

Նուիրատու բարեկամներուն մէկ մէկ ընկալազիր զրկած ենք, և այս շաբթուան թերթին հետ զրկուած ցանկին միջոցաւ ալ կ'ուզենք հրապարակաւ յայտնել անոնց անունները, մեր խոստումին համեմատ: Միայն թէ այն անհատներուն՝ որոնք իրենց անուններուն հրապարակումը չեն փափաքած, ստացած ընկալազիրներուն թիւերը պիտի յիշուին: Նաեւ անկարելի կ'ըլլայ մեզի համար հրատարակել Տաճարակոսի հանգանակութիւնը, զայն բարեխիտաբար կատարող բարեկամներէն մէկուն՝ նուիրատուներու ցանկը չզրկած ըլլալուն համար: Նաեւ «Բահնիւմա»ի միջոցաւ նշանակող բարեկամներուն անունները հոս չպիտի յիշուին, յիշեալ թերթին մէջ անգամ մը հրատարակուած ըլլալուն համար, և միայն պիտի բաւականանք ըսելով՝ «Բահնիւմա միջոցաւ»:

Սա ալ կ'արժէ յիշել թէ մինչ դպրոցին շէնքին համար գիմում կատարելու վրայ էինք, որք մը՝ սր անուղղակի կերպով խնդրին տեղեկացելէր, առանց իրմէ զրամ պահանջուելու, եկաւ և չիկնելով ծածուկ անկիւն մը ԵՐԿՈՒ ՂՐՈՒՇ ՍՈՒՐԻԱԿԱՆ նուիրեց: Այս նպատակաւ մեր ընդունած ԱՌԱՋԻՆ ՆՈՒԷՐՆ էր այս: Այս որբը երբեք չգիտցաւ թէ իր նուէրը յուսով լեցուց մեզ:

Սակայն նուէրներու քանակը և տե-

սակը երթալով աւելցան. որբեր ևւ այրիներ, հարուստներ ևւ աղքատներ, անհատներ ևւ եկեղեցիներ (թէպէտ եկեղեցիներուն գիմում չէ կատարուած), դպրոցներ, կ. դպրոցներ, որբանոցներ, ուսուցիչներ, մայրապետներ, կարգ մը Ասորի, Յոյն, Մարոնի, Լուսաւորչական ևւ Բողոքական բարեկամներ իրենց մասնակցութիւնը բերին: Նուիրատուները հետեւեալ երկիրներէ եղած են. — Սուրիա, Թուրքիա, Յունաստան, Ֆրանսա, Անգլիա, Հարաւային ևւ Հիւս. Ամերիկա, Սուտան, Եգիպտոս, Պաղեստին ևւ Կիպրոս: Տակաւին կը գտնուին այնպիսիներ որոնք խոստացած են ու պիտի վճարեն, ինչպէս նաեւ այնպիսիներ՝ որոնց համար տարակոյս չունինք թէ պիտի փափաքին իրենց բաժինը բերել:

Ներկայիս մեր դպրոցին մէջ 4 տարեկանէն սկսեալ 19 աշակերտներ, որոնց հինգը գիշերօթիկ են, երկու վարժուհիներու առաջնորդութեան տակ կըրթութիւն կ'ստանան փոքր տախտակաւ շէն սենեակի մը մէջ: Ասոնցմէ զատ երեք չափահասներ դպրոցը կ'այցելեն մասնաւոր դասեր առնելու, ինչպէս նաեւ կը ջանանք որ ինչ քաղաքներու մէջ գտնուող հինգ աշակերտներու դաս տալ թղթակցութեամբ: Աջակցութիւններու յատուկ կիրակնօրեայ ժողովներ կը շարունակուին, որոնց ներկայ կը գտնուին նաեւ քաղաքական 130 կոյրեր երբ իրենց ոյժը և կլիման թոյլ կուտան:

Արգ՝ յանուն կոյրերուն մեր ամենամոտեմէ շնորհակալութիւնները կը յայտնենք «Փրէնտը ալ Արմէնիա» անգլիական ընկերութեան և բոլոր անհատներուն որ իրենց համակրութիւնը յայտնած են իրենց աղօթքովն ու նուէրներովը, նաեւ «Բահնիւմա» «Նոր Աւետարեի» և «Կոչնակ» թերթերուն իրենց թանկագին էջերը մեզի տրամադրած ըլլալուն համար, և վստահ ենք թէ հին և նոր բոլոր բարեկամները իրենց բարոյական և նիւթական աջակցութիւնը պիտի նուիրեն անյոպաղ և առեւին՝ շէնքին շինուելուն համար: Ս. Ս. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Ծ. Խմբ. դպրոցս կը հաստատուի ի իշատակ Տէր և Տիկ. Փրէյզլըի

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Գ. ՏԱՐԻ

ՀԱՆԼԵՊ, ՓԵՏՐՈՒԱՐ 14, 1930

ԹԻԻ 3

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Ինքնակենսական պայմանները
և կենսական հարցերը

Քրիստոսեանայ եկեղեցին հոգիներու մէկ ընկերակցութիւնն է։ Անոր անդամակցող անհատներու խորհածները թէպէտ կարեւոր են, բայց առաջին աստիճանի կարեւորութիւն չունին։ Նոյնիսկ անոնց գործերը, թէպէտ մեծ կարեւորութիւն ունին, ուրիշ ազդակի մը հետ լազդատելով երկրորդական արժէք ունին։ Իբր մարդկային հոգիներ նախ Քրիստոսի և ապա իրարու և աշխարհի հետ անոնց յարաբերութիւնն է որ առաջնակարգ կարեւորութիւն ունի։

Եկեղեցիի մը գաղափարականն է անհատներու խմբաւորում մը, սրոնք մէկ են՝ կենդանի Քրիստոսի հանդէպ հաւատարմութիւն և վստահութիւն ցուցնելու մէջ, և մէկ են Անկէ Հոգին ստացած ըլլալու մէջ։ Անոր շնորհիւ միջոցաւ է որ անոնք զԱյն իբր Տէր կը ճանչնան։ Քրիստոսի հոգին միօրինակաբար կ'արտայայտուի իրենց ապրելակերպին մէջ, որուն ներքին և հոգեւոր կողմը, ներքին պատճառներն ու կերպն են որ կարեւոր են։ Իրենց մտքին մէջ ալ, մինչ կեանքի հարցերը լուծել կը ջանան, իրենց յանգած եզրակացութիւնները չեն որ էական տարրը կը կազմեն, այլ հոգեւոր և մտքին ծանօթութիւն մը, որուն տիրացի են անձնական փորձառութեամբ, և որ կը կազմէ իրենց մտածականութիւնը հիմը։

Այսպէս ահա եկեղեցի մը՝ կրօնական նպատակներ հետապնդող ընկերութիւն

մը չէ միայն, և ոչ ալ ընկերային կազմակերպութիւն մը պարզապէս։ Քրիստոնէական եկեղեցիի մը կեդրոնն է այսօր կենդանի եղող Քրիստոսը։ Եւ անիկա այնչափ կենդանի եկեղեցի մըն է, որչափ որ Քրիստոսի հետ այս յատկանշական յարաբերութիւնը ընդհանուրին գիտակցութեան մէջ իրողութիւն մ'է։ Քրիստոս կը շինէ եկեղեցին և ոչ թէ անդամները։ Նախ անդամները կենսական յարաբերութեամբ մը անոր վրայ կ'աւելնան, և ապա կ'ուզան կազմակերպութիւնները։ Մարդիկ եկեղեցիի կը միանան քրիստոնէայ ըլլալու համար չէ՝ այլ քրիստոնէայ եղած ըլլալուն համար, եկեղեցիին միջոցաւ Քրիստոսէ շնորհք ստանալու համար չէ, այլ եկեղեցիի միջոցաւ Քրիստոսի ծառայելու համար։ Քրիստոսի շնորհքը անմիջապէս և ուղղակի կերպով կը հասնի ամէն հաւատացեալին։ Եկեղեցին Աստուածային շնորհքի միջոց մը ըլլալէ աւելի վկայութեան եւ ծառայութեան համար միջոց մըն է։

Եկեղեցին աշխարհի հանդէպ շատ մը սիրոյ պարտականութիւններ ունի, որոնք կը զրդուին ներքնականաւ Հոգիին կողմանէ։ Անոր սիրոյ առաջին պարտականութիւնն է աւետարանչութիւնը, որուն նպատակն է դրսեցիներուն իմացընել այս օրուայ կենդանի Քրիստոսի մէջ իրենց համար կարելի օգնութեան, ներուժի և ընկերակցութեան մասին, որպէս զի անոնք ալ անմիջապէս սկսին մեզի հետ Հոգիին մէջ քալելու։

Թող ամէն մէկ Քրիստոնէայ անհատ իր մասին խորհի այս հոգեւոր գործունէութեան և փորձառութեան լոյսին

տակ: «Եթէ Հոգիով կ'ապրինք, Հոգին համեմատ քաղենք» (Պաղ. 5. 25): Այսպէս խորհինք եկեղեցիի մօտին: Զանաք մեծնալու հոգիով, այսինքն մեծնալու Անոր շնորհածնիրը առնելու մէջ, զԱյն հասկնալու և Անոր փափաքները կատարելու մէջ: Այսպէս Քրիստոսի մէջ հոգին երու մէկ ընկերակցութիւնը ըլլալու մեր յատկութիւնը՝ մեր գաղափարներուն և կեանքերուն մէջ բարձրագոյն տեղը պիտի գրաւէ: Իւրաքանչիւր տեղակիւն ընկերակցութիւնը՝ ուրիշներու ներքին կեանքին վրայ հոգեւոր շօշափելի ազդեցութեան մը կեղրոնը պիտի ըլլայ: Աստուծոյ թագաւորութիւնը հոգեւոր թագաւորութիւն մըն է: Մեր կոչումը հոգեւոր կեանք մ'է: «Այս է Աստուծոյ ճշմարիտ շնորհքը» (Ա. Պետ. 5. 12): Հաւատարիմ ըլլանք այս կոչումին եւ այս թագաւորութեան: Ժ. Է. ՄԷՐԻՆ

ՇՈՂԵՐ

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՄԸ ԽՆՉ ԿԸ ՊԱՏՄԷ

Տուայթ Մուտի, մեծ աւետարանիչը, որ մը կը քարոզէր «Մի խաբուիք Աստուծոյ ծաղր չըլլալը. վասնզի Խնչ որ մարդ կը սերմանէ, նոյնը պիտի հնձէ» (Պաղ. 6. 7, 8) համարին վրայ: Քարոզը լրմնալուն պէս ետեի նստարաններէն մարդ մը իր ձեռքը վերցուց ըսելով «Պր. քարոզիչ, կրնա՞մ մի քանի բառ աւելցնել»: Մինչ Մուտին տակաւին կը տատամէր, երիտասարդը շարունակեց. «Այո, կրնա՞մ ձեզի պատմութիւն մը պատմել իբր ազգարարութիւն մը երիտասարդ եղողներուն»: Ապա յառաջ անցնելով այդ մարդը այդ գիշեր իր կեանքին պատմութիւնը պատմեց:

«Կը տեսնէք որ ալիստուն մազեղ ունիմ, որոնք տարիքի յառաջացումով չէ որ ճերմկցած են. քանզի ես տակաւին երիտասարդ եմ: Անոնք սաքսափելի

զղջումի գիշերուան մը մէջ ճերմկած են: Ես տունէն փախայ՝ զգալով որ անոր ազդեցութիւնը շատ զօրաւոր կը ճնշէր իմ վրաս: Գիշերային պահերուն կը լսէի որ ծնողներս ինծի համար կ'աւզօթէին, որպէսզի ես Աստուծոյ գամ: Ատիկա իմ վայրոյթս զրգուեց եւ ես շատ հեռու քաղաք մը գացի: Շաբաթներ ամիսներ անցուցի շուայօրէն վատնելով: Եւ մինչ տակաւին հոն կը գտնուէի սատարօրինակ գաղափարը միտքս եկաւ. «Ես Խնչ պիտի ընեմ եթէ մօրս բան մը պատահի»: Անուզակի կերպով ես լուր առած էի թէ մայրս հիւանդացած էր: Գաղափարը զիս դողացուց, անմիջապէս իր բնակած գիւղը ետ գացի. դաշտերու մէջէն զէպ ի տուն ուղղուեցայ: Մինչ հայրենի տունս կը մօտենայի, խորհեցայ ճամբէն չեկիլ և գիւղին գերեզմանատունը երթալ, մօտեցելով որ մայրս աւանց իմ գիտնալուս հոն զրուած կրնայ ըլլալ. և երբ մօտեցայ՝ անոր նոր շիրիմը տեսայ, հոգը տակաւին կակուզ էր: Երիտասարդներ, ես այդ գիշերը մօրս գերեզմանին քովը անցուցի: Ես կը հաւատամ որ Աստուծոյ ինծի ներկեց. բայց երբեք ես ինծի չեմ կրնար ներել:»

ԸՆԹԵՐՑԱՍԵՐԸ

Քանարեան կղզիներու բնակիչ մը, որ Նոր Կտակարան մը ծախու առած էր, ստպէս կը վիսյէ իր բարեկամին. «Ես միշտ ընթերցող մը եղած եմ. բայց աւելի գիտական գիրքերու վրայ ժամանակ վատնած եմ: Կրօնքի մասին երբեք հոգ չեմ ըրած. քանզի անիկա գործնական կեանքի հետ անհամաձայն թուած է ինծի: Աստուծաբաններու Քրիստոսը երբեք չեմ հասկցած, բայց հիմա զԱստուծոյ գտայ Նոր Կտակարանի էջերուն վրայ, Աստուծոյ մը սիրոյ և գուլթի՝ յայտնուած Քրիստոսի մէջ: Աշխարհի իմաստութիւնէն յուսահատած այս գրքին մէջ մտքիս և հոգեւորս համար սընունդ գտած եմ:»

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

Ս. ԳԻՐՔԸ ԻԲՐ ԿՐԹԻՉ ԱԶԴԱԿ

1. ՄՏԱԽՈՐԱԿԱՆ ՄԱՐԶԻՆ ՄԷՋ

(Շարունակութիւն թիւ 266)

Սուրբ Գիրքը, որուն թէպէտ թանկարժէք գոհարները շատ յստակ կերպով կը ցոլանան պարզ համարներուն մէջ, քննելի թանկագին նիւթեր կը ներկայացնէ ուսումնասէր մտքին առջեւ: Զանոնք հասկնալու եւ վայելելու համար թէպէտ անհրաժեշտ է շատ լեզուներ, պատմութիւն եւ փիլիսոփայութիւն գիտնալ, այսուհանդերձ խորհող մարդիկ ստիպուած են զանազան գիտութեանց աղբիւրներուն դիմելու կրօնքին մեծ փաստերը ըմբռնելու համար: Կրօնքը ուսումնասիրելու ատեն կարելի է օգտագործել ամէն տեսակ ծանօթութիւնները: Ս. Գիրքը լեցուն է այնպիսի նիւթերով որոնք մեծագոյն միտքերու կողմանէ ուսումնասիրուելու արժանի են, և որոնցմէ հրապուրուելի անկարելի է անոնց համար:

Ս. Գիրքը մեծ միտքերը ուսումնասիրելու կը մղէ երբեմն իր լուծութեամբը: Մեծ վարդապետին մարմնական երևոյթը, Անոր մօրը կենսագրութիւնը, հրեշտակներու ծագումը, բնութիւնն ու պաշտօնը, հոգեւոր մարմինն մասնաշատուկ բնոյթը, երկինքի տեղը, եթէ ահա է՝ այդ տեղի զբաղումները, հոն գացող հոգիներու զիրար ճանչնալը, — ասոնց եւ ասոնց նման հետաքրքրական նիւթերու մասին անոր լուծութիւնը միշտ ուսումնասիրութեան առարկայ եղած է: Կարծես թէ սոսկա գիտմամբ այսպէս եղած է, որպէս զի միտքն ու հոգին չգաղբին անոնցմով զբաղելէ:

Ս. Գիրքին մեզի ներկայացուցած կրօնքին մէջ Բրիստոսի անձնաւորու-

թեան աստուածային և մարդկային բնոյթներուն յարաբերութիւնը, վերստին ծնունդի փորձառութեան մէջ աստուածային և մարդկային կամքերու առնչութիւնը, չարիքի ծագումը, Աստուածային նախախնամութեան և մարդկային ազատ կամքի իրարու հետ համաձայնութիւնը, փրկագործումի մէջ Անոր սէրին և արգարութեան ներդաշնակումը, և ուրիշ նման հարցեր ինչ խորունկ ուսումնասիրութեանց պատճառեղած են: Ինչո՞ւ Ս. Գիրքը պանոնք առանց լուծելու ներկայացուցած է մեզի: Ինչո՞ւ անոնց մասին լուծութիւնը նախընտրած է: Արդեօք անոնց կարեւոր չըլլա՞ն է անոնց պատճառը: Ո՛չ, Աստուծոյ նպատակը սա եղած է որ մարդկային միտքը շարունակ անոնցմով զբաղի: Ծննդոց գրքին առաջին գլխին մէջ տիեզերքի ստեղծագործութիւնը կը յիշուի միայն սա կարճ պարբերութեամբ. «Երկնքի և երկրի սկիզբը այսպէս եղաւ:» Անիկա ինչ ճոխ ատաղձ կը հայթայթէ երկրաբաններու, պատմաբաններու, իմաստասէրներու եւ բնագէտներու: Այս մասին գրուած գիրքերը մեծապէս ճոխացուցեր են զբաղաբանները: Կարեւոր է նաեւ յիշել գեղարուեստի ճիւղերը, որոնք շատ աղդուած են Ս. Գրքէն: Շատ հաւանական է որ Հրեաները Հին Կտակարանի շրջանի միջոցին Եգիպտոսէ, Ասորեստանէ, Յոյներէ և Հռովմայեցիներէ շատ օգտուած ըլլան իրենց ճարտարապետութեան, նրկարչութեան և բանաստեղծութեան մէջ: Բայց Նոր Կտակարանի շրջանին միջոցին եւ անկէ ետքն ալ, Հին Կտակարանի արարչագործութեան, ջրհեղեղի, Ելից պատմութիւնները, մարգարէներու գործերն ու տեսիլքները, Բրիստոսի ծնունդը, Եգիպտոս փախուստը, երիտասարդութիւնը, մկրտութիւնը, հրաշքները, կերպարանափոխումը, խաչեութիւնը, յարութիւնն ու համարձուածը, առաք-

եալներու պործերը, քրիստոնէութեան միջոցաւ աշխարհիս հաղորդուած Դոր և բարձր գաղափարները, սաղմոսներն ու երգերը շատթանկազին նիւթեր հայթայթած են աշխարհահռչակ նկարիչներու և երաժշտագէտներու: Ասոր պերճախօս վկաներն են առաջին դարէ մնացած վսեմ շարականներն ու մեղեդիները, Հռովմի ստորերկեայ գերեզմանները (քաղաքօմբ) Ռափայէլի և Անժէլոյի Սիւքիւն ռեսօնանները, «Կերպարանափոխութիւն», «Համբարձում» եւ նման նկարները, Հռովմի, Միլանի, Փարիզի, Լոնտոնի, Կ. Պոլսոյ, Անիի, Ս. Փետրոսպօլսի Ս. Պետրոս, Ս. Պողոս, Ս. Սոփիա, Ս. Մարկոս, Նոթր տամ և ուրիշ հարիւրաւոր մայր եկեղեցիներն ու շէնքերը, երգեցողութիւնները, ուղղակի քրիստոնէութեան պատկանող նկարները, քերթուածներն ու երաժշտական կտորները, որոնց չգոյութեամբ մեծապէս աղքատացած պիտի ըլլար աշխարհիս գեղարուեստը:

Մեր ակնարկը իմացական կեանքի և գործունէութեան որ մարդին ալ ուղղելու ըլլանք պիտի տեսնենք թէ Ս. Գիրքն է եղած անոնց մղիչ ազդակը: Ուստի զարմանալի չէ տեսնել թէ Ս. Գրքի ուսումնասիրութեամբ հռչակ ստացած մարդոց մէջ կը գտնուին Նէանտրիի, Ս. Օգոստինոսի, Անսելմոսի, Որիգինէսի, Ագուինասի, Պրթլլրի, Էտուարտի և Շնորհալիի նման աստուածաբաններ և կրօնական իմաստասէրներ, Ոսկեբերանի, Պիլլրի, Սալմալորաի նման քարոզիչներ, Երազմոսի, Կալվինի, Մէթհիւ Հէնրիի նման մեկնիչներ, որոնց երկերը լեցուցած են զրադարանները:

Ընդհանրապէս Ս. Գիրքը ուսումնասիրողներու շարքին մէջ կը գտնուին այն պատմաբանները որոնք ճոխ ծանօթութեան տէր, ուսումնասիրութեան մէջ լայնամիտ, մանրամասնութեանց մէջ ճշգրիտ, քննութեան մէջ թափանցողութեան կարող, հոգեւոր կարեկցութեան մէջ

անկեղծ են և միևնոյն ատեն հմուտ են թէ ինչպէ՞ս քրիստոնէութիւնը կրցած է նուաճել իրեն հակառակօրդ ոյժերը եւ թէ ինչպէ՞ս քրիստոնեայ եկեղեցին վարդացած է հոգեւոր կեանքի և քրիստոնէական գիտակցութեան մէջ: Ամենաճշմարիտ պատմաբանը այն է որ բարոյական կարեկցութեան տէր է և մարդկային կեանքի մէջ Նախախնամութեան գործերուն կը հաւատայ: Նէանտրի իր նշանաւոր և մեծ պատմական գործը լրացնելէ վերջ ըսաւ. «Յոգնեցայ, ա՛լ տուն երթամ»: Ու անոր զագաղը, որուն շուրջ շարուած էին Ս. Գրքի մասին իր գրած երկասիրութիւնները, իր հազարաւոր աշակերտներուն և թագաւորին կողմանէ ուսամբարձ գերեզման կը տարուի: Մեր նեղ էջերը չեն ներեր որ յիշուին այն հնախօսները, աշխարհագիրները, հին սովորութիւններն ու բարքերը ուսումնասիրող գիտունները, խուզարկուներն ու շրջիկները, որոնք մեծապէս դիւրացուցած են Ս. Գիրքի ուսումնասիրութիւնը:

Ս. Գիրքը մեծ ծառայութիւն մատուցած է հանրային կրթութեան զարգացումին մէջ: Հին յունական դըպրոցները ուրիշ երկիրներէն մեծ թիւով ուսուցիչներ և աշակերտներ կը հրապուրէին Աթէնքի մէջ բարձր ուսում առնելու համար: Բայց անոնք մեծ գործ մը չեն կատարած՝ հանրային վարժարաններ բանալով բոլոր ժողովուրդին մանուկները և աղքատները կրթելու մէջ: Բայց քրիստոնէութեան և Ս. Գրքի առաջին և մեծագոյն գործերէն մէկը, իրենց վացած բոլոր տեղերուն մէջ, կրթութիւնը ընդհանրացնել եղած է հանրային դպրոցներու հաստատութեամբ: Բարիզի, Օքսֆորտի, Բէյմպրիճի և ուրիշ շատ մը համալսարաններու հաստատումին առաջին և գլխաւոր պատճառը Ս. Գրքի ուսումնասիրութիւնը եղած է: Միջին Դարուն մէջ Ապանիոյ մէջ ալ արաբական համա-

լսարան մը հաստատուեցաւ, որ սակայն առանց յաջորդ մ'ո. նկնալու գոյութենէ դադրեցաւ:

Հնդիկները ունին իրենց վեճաները, Պարսիկները՝ իրենց Եռեփանիչատները, եւ ուրիշ կրօններն ալ՝ իրենց սրբազան մատեանները, որոնց մէջ չափով մը բարոյական եւ հոգեւոր լոյս կը գտնուի: «Աշխարհ գալով բոլոր մարդերը լուսաւորող Լոյսը» գանոնք կատարեալ մթու-թեան մէջ չէ թողած: Բայց նորէն քրիստոնեայ գիտուններն են, որ ամէնէն աւելի զանոնք կ'ուսումնասիրեն եւ անոնց մասին կը գրեն: Անոնք շատ քիչ սատարած են կրթութեան ընդհանրացումին: Բայց առ Ս. Գիրքը, տարբերութիւն չ'ընէր թէ անոր մասերը երբ, ուր եւ որոնց կողմանէ գրուած է, չկայ ուսումնասիրող մը որ կարենայ ուրանալ իր մտքին վրայ անոր ունեցած մեծ ազդեցութիւնը:

Ե. դարէն սկսեալ բարբարոս ցեղերը—կոթերը, Տիւտոնները եւ Սլաւները—Հոովմէական աշխարհի վրայ արշաւելով ամէն բան տակնուվրայ րրին: Բոլոր քաղաքակրթութիւնը, դրականութիւնը գրեթէ կործանեցան: Քրիստոնեայ գրողները, քաջողիչներն ու վանականները լեռները եւ վանքերը ապաստանեցան: Այնպէս թուեցաւ թէ Եւրոպայի վրայ տաճոռող այս վայրենի հորդանիւրը երբեք տրամագրութիւն չունին քաղաքակրթութեւն համար: Ատեն անցաւ, չափով մը խաղաղութիւնը վերահաստատուեցաւ եւ քրիստոնեաները իրենց պահւելտած տեղերէն դուրս ելան, եւ իրենց ձեռքը Ս. Գիրք ունենալով այս բարբարոս ցեղերը սկսան քաղաքակրթել, դպրոցներ ու եկեղեցիներ հաստատելով զանոնք կրթել: Ս. Գիրքը անոնց լեզուներուն թարգմանուեցաւ եւ այսպէս անոնց միտքերը խորհելու զրդուեցան: Անոնց մէջ քաղաքակրթական կազմակերպութիւններ յառաջ եկան եւ անոնց

լեզուներն ու պատմութիւնները կենդանացան:

Անկասկածելի է որ աշխարհիս ամէնէն բարձր կրթիչ ուժերն են Ս. Գիրքը եւ անոր քարոզած կրօնքը: Հիւսնի Չաւակը, մեծագոյն Ուսուցիչը, հասարակ ժողովուրդին միտքը լուսաւորեց եւ կենդանացուց: Ս. Գիրքը՝ առանց ոեւէ գիտութեան հակառակ ըլլալու՝ խորհող միտքերը յառաջդիմելու կը մղէ անոնց առջեւ ընդարձակ ասպարէզներ բանալով: Նոյնիսկ միայն մտաւորական լուսաւորումի համար այս Գիրքը կ'արժէ ուսումնասիրել:

(Շար.)

Կ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

ՄԵՐ ՄԵԾԱԳՈՅՆ ՊԷՏԻՐ

Փրոֆ. Լ. Լեւոնեան կրօնական համազումարի մը մասնակցելու համար Գահիրէի մէջ ներկայութեանը առթիւ, հերոս Դեկ. 1, Կիր. իրիկուն նոյն քաղաքի Հայ Աւետ. Եկեղեցիին մէջ քարոզ մը տուած է, որուն Պր. Յովհ. Շանլեանի կողմանէ մէկ ամփոփումն է հետեւեալ գրութիւնը:

Ծն. Խմբ.

Կ'ուզեմ այս իրիկուն կարճ կերպով ձեզի հետ մտածումի առարկայ ընել կէտ մը, քաղուած մեր անցեալ երկամիայ փորձառութիւններէն:

Երկուքուկէս տարի առաջ հոս կը գտնուէի. եւ գրեթէ մինչեւ տարի մը առաջ բոլոր աշխարհը կը պտըտէի,—Եգիպտոս, Սուրիա, Ֆրանսա, Անգլիա, Ամերիկայի շատ մը մասերը եւ այլն: Մինչ այս տեղերը կը պտըտէի ինքնիւրենս սա հարցումը հարցուցի. «Ի՞նչ է մեր մեծագոյն պէտքը», որուն պատասխանեցի, «հոգեւոր բաները»: Այսինքն մինք պէտք ենք հոգեւոր բաները բարձրը դնել եւ զայն ուրիշներուն ցուցնել: (Բ. Օրինաց 10, 12.) Ամերիկա կամ ուրիշ տեղեր երթալ մարդը մարդ չ'ընէր: Մարդ մը Շիգակոյի մէջ գիր, անիկա հոն

կրնայ հարստանալ բայց կրնայ նաեւ ա-
նառակ եւ բարոյական վարկէ զուրկ ըլ-
լալ: Ուրիշ քաղաքներ երթալ մեր ցա-
ւերը չի դարձաներ: այսօր ազգովին
պէտք ունինք հոգեւոր ըլլալու: Հաս-
կըցայ թէ Պոսթոնի մէջ 3000 հայեր կան,
որոնց մէջ կ'ըսեն թէ մէկ հատ խոկ հա-
ցի կարօտ չի գտնուիր: Եւ սակայն ինչ
վիճակ կը ներկայացնեն արդեօք: Կա-
տարեւապէս անտարբեր եւ զուարճու-
թեանց անձնատուր եղած: Հոգեւոր
արժէքները պէտք է գերի վեր դասել:
«Նախ Աստուծոյ Թաղաւորութիւնը», ը-
սաւ Յիսուս:

Այս մասին կ'ուզեմ երեք կէտեր յի-
շել, որոնց կը կարօտինք:

1. Պէտք ունինք հոգեւոր աստուա-
ծապաշտութեան: Ինչո՞ւ: Քանզի այս
կերպով կրնանք բարոյականի տիրանալ,
եւ մենք միշտ կը կարօտինք բարոյա-
պէս բարձրանալու: Ի՞նչ է բարոյա-
կանութիւնը. շիտակը խօսիլ, ճշմար-
տութիւնը սիրել, ընտանեկան մաքուր
կեանք ունենալ է բարոյականութիւ-
նը: Պարտած վայրերու մէջ ինծի ծա-
նոթ շատ մարդեր տեսայ, որոնք լաւ
հարստութեան տիրացի են, բայց ու-
րոնց ընտանեկան կեանքը փտտած է:
Կ'ուզեմ շեշտել թէ մեծապէս կը կարօ-
տինք մաքուր բարոյականի: Մեզմէ
շատերը քաղաքակիրթ երկրներու մա-
կերեսային բաները կը կապեն, կ'իւ-
րացնեն, առանց տեղեակ ըլլալու ա-
նոնց կեանքին խորերը գտնուող քա-
ղաքակրթութեան: Մեր երիտասարդ-
ները հերոսական կեանքի արտաքին
բաներէն յափշտակուած են, որոնք
մարմինն ներարկուող շիճուկի մը նման
զգայազրկած է զիրենք, կը մաղթեմ
որ այժմ եկեղեցիին մէջ մանուկները մեծ-
նան անբասիր բարոյականով, որուն հա-
մար կրօնքի կը կարօտինք:

2. Կը կարօտինք լայնամտութեան,
այսինքն պէտք ունինք ուրիշներուն ալ

զաղափարները հասկնալու, ճշմարիտ
խոնարհութեան հոգիին տիրանալու եւ
միայն ինքզինքնիս չխորհելու: Երբ կը
խորհիմ որ ես՝ շիտակ եմ եւ եկեղեցիի մէջ
ե՛ս կամ, այն ատեն նեղսիրտ եւ կուտա-
րար հոգի մը յառաջ կուգայ: Այս էր
պատճառը հրեաներու կործանումին, ու-
րոնք միշտ զիրար կը դատապարտէին:
Յիսուսի ապրած ատենը ասոնք չորս հինգ
խմբակցութիւններու բաժնուած էին:
Ինչ է այսօրուան բաժանումը. մինչ մէկ
կողմէն շինելու կ'աշխատինք, միւս կող-
մէն աւերում եւ բաժանում յառաջ կու-
գայ: Մեր եկեղեցիներուն վրայ զուրկու-
րանք. ամէնք ալ եկեղեցիի զաւակներ
ենք: Մեզմէ ոմանք իրենց մատերը Ս.
Գրքին որոշ մէկ համարին վրայ կը գնեն
եւ անոր չհաւատացողները կը դատա-
պարտեն. լայնամտութիւն պէտք է:
Ասկէ քիչ առաջ՝ նոր եկող աշակերտ մը
ինծի սա հարցումը ուղղեց. «Ինչ է ձեր
զաղափարը Քրիստոսի մասին» եւս պա-
տասխանեցի թէ մեր մտքին ըմբռնումէն
եւ մեր իմացական կարողութիւնէն շատ
բարձր է Քրիստոս, զոր անկարելի է եր-
կու բառով սահմանել: Պէտք է միշտ հեղ-
ու խոնարհ ըլլալ, եւ մտածել թէ մեր չը-
դիտցածները շատ աւելի են քան մեր
գիտցածները: Քրիստոս կը պահանջէ որ
«Թու Տէր Աստուծոյ պաշտես»: Մենք
կը խորհինք թէ մեր եկեղեցիները միւս-
նորէն աւելի բարձր են. բայց սիրոյ հո-
գիին կարօտ ենք: Խմբակցային հոգիէն
ազատուելու մէկ միջոցն է Քրիստոսի
տուածները բարձր դասել: Աշխատեցէք
որ լայնամտութեան օրինակ ըլլանք:
Հոգեւոր արժէքները միշտ գերազանցք:

3. Պէտք ունինք խաղաղասիրու-
թեան: Ասկէ մի քանի շաբաթ առաջ
Աթէնքի մէջ խաղաղութեան խորհրդա-
ժողով մը տեղի ունեցաւ, որուն մաս-
նակցելու համար ամէն ազգէ եւ երկրէ
մարդիկ եկած էին: Խաղաղութեան
համար աղօթքներ կը կատարուէին:

Բայց Հայ չկար. և ես ինքզինքիս հարցուցի. «Ամէնէն շատ տառապողը մենք ենք, բայց ինչո՞ւ. խաղաղութեան համար ընկերութիւն չունինք:» Ամերիկա՝ ժողովի մը մէջ հայրենասիրութեան համար ճառեր կը խօսուէին: Շատ գիւրդին է Ամերիկա բնակիչ և հայրենասիրութեան վրայ ճառել. շատ ձեռքեր կը ծափահարէին զանոնք: Բայց խաղաղութեան մասին եթէ խօսիս քեզի կը հակառակին: Խաղաղասէր հոգիի պէտք ունինք: Ես կ'ուզեմ որ աշխարհ մեզի նայէ և ըսէ, «Խաղաղասէրները:»

Արդ՝ կը կարօտինք սրտով մաքրութեան, բարոյականութեան, խոնարհութեան, լայնամտութեան և խաղաղասիրութեան:

«Երանի հեղերուն, վասնզի անոնք պիտի ժառանգեն երկիրը:»

«Երանի անոնց որ սրտով մաքուր են, վասնզի անոնք պիտի տեսնեն զԱստուած:»

«Երանի խաղաղութիւն ընողներուն, վասնզի անոնք Աստուծոյ որդիներ պիտի կոչուին:»

Այսօրէնք որ Աստուած այս օրհնութիւնը շնորհէ մեզմէ իւրաքանչիւրին, մեր ընտանիքներուն և մեր ազգին:

«Եթէ Գուն կը փափաքիս առաւելագոյն չափով օգտակար ըլլալ, քու ժամանակդ եւ ոյժդ մի՛ գործածիր վիճելի բնոյթ ունեցող բաներուն պաշտպանը կամ հակառակորդը հանդիսանալով, այլ բացայայտ մոլութեան գէ՛մ խօսելով եւ իրական, էական սրբութիւնը քաջալիւրելով եւ յառաջ մղելով:»

ՏՐ. ՓԱԹԸՐ

«Մեծ քարոզիչները անոնք եղած են որոնց պատգամը Ս. Գրքէն բղխած կամ անոր վրայ հաստատուած է:»

ՏՐ. Բ. ՈՒ. ԲԾՃԸՐԶ

ՀԱՅԱՍՏԱՌ ԹՐԲԵՐԷՆ Ս. ԳԻՐԲԸ

Մօտաւորապէս մէկ ու մէկ քառորդ դար առաջ Գլօտիւր Ռիչ անուն տաղանդաւոր և զիտական միտք ունեցող մէկը Պաղտատ զրկուեցաւ Բրիտանական կառավարութեան իբրեւեղայացուցիչը: Այս անձնաւորութիւնը Թուրքիոյ քրիստոնեայ ցեղերուն վրայ սկսաւ մեծ հիացում ունենալ: Եւ երբ ան Բրիտանական Ս. Գրքի Ընկերութիւնը թրքախօս հայերուն վիճակով հետաքրքրեց, տեսնուեցաւ որ հայերէն գիրերով գըրուած տաճկերէն լեզուով՝ Սաղմոսաց մէկ թարգմանութիւնը կար միայն:

Այս գիրքը նոյննով այնչա՛փ հազուագիւտ էր որ զայն ունեցող վանականները չթոյլատրեցին որ Ընկերութիւնը անոր մէկ օրինակը ունենայ: Ռուսական Ս. Գրքի Ընկերութիւնը 1816 ին որոշեց հայատառ թրքերէն նոր կրտակարան մը հրատարակել:

Սերոբ (Seraphim) անուն հայ ուսեալ վանահայր մը, որ մեծ միսիօնար Հէնրի Մարթինը անձամբ ճանչցած էր, Փեթերպուրկի մէջ այս թարգմանութեան ձեռնարկեց եւ աւարտեց զայն: Այս նոր կտակարանը տպագրուեցաւ 1819ին, եւ բոլոր հարաւային Ռուսիոյ եւ Անատոլիոյ մէջ տարածուեցաւ Հայ Պատրիարքի արտօնութեամբ: Երբ առաջին Ամերիկացի միսիօնարները Այնթապ եւ Տիարպէքիւր այցելեցին այս նոր կտակարաններէն գտան ժողովուրդին ձեռքը: Սաղմոսներու մէկ թարգմանութիւնը, որ պատրաստուած էր Բրիտանական Ս. Գրքի Ընկ. եան գործակալ վեր. Հէնրի Տ. Լիվսի կողմանէ, 1822ին լոյս տեսաւ Կ. Պոլսոյ Հայ Պատրիարքարանի տպարանէն:

Մը. Լիվս 1823ին ձեռնարկեց սրբագրելու Ռուսական Ընկերութեան հրատարակած նոր կտակարանը, որ Թուր-

քիոյ հայերուն պէտքերուն այնքան ալ չէր յարմարեր: Ինքը եւ իր հայ գործակիցները իրենց լաւագոյնը կատարելէ ետքը ձեռագիրները Ուիլիւմ Կուտէլ անուն Ամերիկացի միսիօնարի մը յանձնուեցան կրկին սրբագրութեան եւ հրատարակութեան համար: Ահա այս կերպով էր որ «հայատառ թրքերէն Ս. Գրքի հայրը» իր կիսանքին մեծ գործունէութեան շրջանը մտաւ: Թուրքիոյ մէջ պայմանները այնչա՛փ դժուարացան որ ան ստիպուեցաւ ատենի մը համար թողուլ զայն, եւ այսպէս հայատառ թրքերէն սրբագրեալ Նոր Կտակարանը լոյս տեսաւ 1831ին Մալթայի մէջ Ամերիկեան Պօրտի տպարանէն:

Տր. Կուտէլ անմիջապէս սկսաւ Հին Կտակարանի թարգմանութեան: 1833ին, Կ. Պոլիսը աւերող մեծ հրդեհներէն մէկուն միջոցին, անիկա կորսնցուց իր բոլոր գոյքերը, որոնց մէջ նաեւ թարգմանական երկամեայ աշխատանքին արդիւնքը: Սկիզբէն ան դարձեալ սկսաւ թարգմանելու եւ հայատառ թրքերէն Ս. Գիրքը ամբողջութեամբ 1843ին առաջին անգամ ըլլալով տպագրուեցաւ Կ. Պոլսոյ մէջ: Տր. Կուտէլ շարունակեց բազմիմաստներ ընել իր թարգմանութեան մէջ, որուն սրբագրեալ օրինակները հրատարակուեցան 1857ին եւ 1863ին:

Թէ անիկա որչափ յստակ կերպով ըմբռնած էր այս գործին կարեւորութիւնը շատ որոշ կը տեսնուի 1842ին գրած իր մէկ նամակին մէջ, ուր ան կ'ըսէ. «Հայերու հետ գրեթէ մեր բոլոր գործը աւաւելապէս Ս. Գրքի գործ է: Ս. Գիրքն է մեր միակ չափանիշը եւ դիմելիք վերջնական հեղինակութիւնը: Առանց Ս. Գրքի կարելի էր որ մենք բան մը ըսէինք իսկ եպիսկոպոսներն ու քահանաները ուրիշ բան մը ըսէին, եւ դատաւորը ո՛ր պիտի գտնուէր: Մեր բոլոր ջանքերը օդը ծեծել պիտի նշանակէին միայն ... եւ այսպէս թէ մենք

եւ թէ ժողովուրդը մեր ձեռքերուն մէջ Ս. Գիրքը ունենալով յաւիտենական ժայռին եւ մշտնջենաւոր շէնքին վրայ կայնած կ'ըլլանք: Բայց առանց անոր աւագի վրայ չինած կ'ըլլանք եւ տունը ենթակայ եղած կ'ըլլայ ամէն փոթորիկէն կործանուելու եւ տարուելու:» Այնպիսի փոթորիկներ, զորոնք Հայր Կուտել չէր կրնար իսկ նախատեսել, պատահեցան այդ գրքին ընթերցողներուն. բայց Աստուծոյ օգնութեամբ անոնց հաւատքը աննուաճելի մնաց մեծ տաղնապի պահուն:

Տոքթ. Ա. Թ. Փրէթ, որ 16 տարի իբր բժշկի միսիօնար Այնթապի, Հալէպի եւ Մարաշի մէջ գործած էր, 1868ին Կ. Պոլիս հրաւիրուեցաւ կատարելապէս սրբագրելու համար Տր. Կուտէլի Ս. Գիրքը, որ աւելի լաւ պիտի գոհացնէր Հայ հատարակութեան զարգացած դասակարգերուն պէտքերը:

Նոր Կտակարանի թարգմանութեան մէջ անոր ունեցած յաջողութիւնը նոր ծրագրի մը գործածումին ճամբայ բացաւ թարգմանութեան մէջ: Հայատառ, յունատառ եւ արաբատառ թրքերէն թարգմանութիւնները իրարմէ անկախ կերպով թարգմանուած ըլլալուն համար յաճախ կը պատահէր որ նոյն հատուածը տարբեր թարգմանութիւններու մէջ տարբեր կարգացուի: 1873ին մէջ թարգմանչաց մասնախումբ մը նշանակուեցաւ պատրաստ բոլոր թրքերէն թարգմանութիւնները բաղդատելու եւ միայն մէկ տեսակ թրքերէն թարգմանութիւն մը հրատարակելու, որ հայերէն, յունարէն եւ արաբերէն տառերով տպագրուելով Թուրքիոյ բոլոր թրքախօս ցեղերուն պէտքերը գոհացնէր:

Այս մասնախումբին օտար անդամներն էին Տր. Իլիաս Րիկզ, Տր. Ժ. Ֆ. Հէրիքե. Մր. Ր. Հ. Ուիլյքլի, Զմիւռնիոյ միսիօնարը: Անդամներէն մէկն էր բնիկ Բիլիսցի Վեր. Աւետիս Կոստանեան, ու

րուն վրայ ծանրացաւ թարգմանութիւնը պատրաստելու գործին մէկ մեծ բաժինը: Պալատի քարտուղարներէն Շիւքրի և Ահմէտ էֆէնտիները իրենց օժանդակութիւնը բերին թարգմանութեան աւելի զրական ոճ մը տալու համար: Պատրաստուած թարգմանութիւնը 1678 ին տպագրուեցաւ երեք յիշեալ զիրերով: Մեր ներկայ գործածած Ս. Գիրքը այս թարգմանութիւնն է, որ առկէ իվեր միայն աւելի պարզ ընելու համար թեթեւ բարեփոխութեան ենթարկուած է: Վերջին տպագրուելից 25 տարիներու միջոցին այս թարգմանութիւնը հարիւր հազարաւոր մարդերու համար հոգեւոր ուժի և մխիթարութեան աղբիւր մը եղած է:

Անցեալ դարուն փորձառութիւնը ցուցուց թէ աւելի պարզ թարգմանու-

թիւնները ամէնէն գոհացուցիչները եղած են: Տը. Կուտէլի թարգմանութիւնները առաւելապէս իրենց պարզութեան համար ժողովուրդին սրտին ամէնէն մօտ գտնուած են: Ներկայիս Ս. Գիրքի ընկերութիւնները ձեռնարկած են նոր թրքերէն թարգմանութեան մը, որ պարզութեան և զուտ թրքական ոճի տեսակէտէն պիտի գերազանցէ ուրիշ ոեւէ մէկ թարգմանութիւնը: Անշուշտ ասիկա պիտի տպագրուին որ թրքերէն տառերով: Նոր Կտակարանի մասերը չուտով պիտի հրատարակուին և կը յուսացուի որ ան՝ Աւետարանի մասին աւելի յստակ գաղափար մը պիտի տայ ոչ միայն թուրքիոյ քաղաքացիներուն, այլ նաև ամէն տեղ գտնուող թրքախօս ժողովուրդներուն:

ՀԱՅԱՍՏԱՌ ԹՐԳԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆԹՅ.

ԵՒ ՍՐԲԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՅՈՒՑԱԿԸ

Թուական	Թարգմանիչ	Սրբագրիչ	Գրքի մասը
?	?		Սաղմոսներ
1819	Սերոբ	. . .	Նոր Կտակարան
1822	Լիվս	. . .	Սաղմոսներ
1831	(Սերոբ)	Լիվս, Կուտէլ	Ն. Կտակարան
1843	Կուտէլ	. . .	Հ. Կտակարան
1843	(Կուտէլ)	Կուտէլ	Ն. Կտակարան
1863	(Կուտէլ)	Կուտէլ	Ս. Գիրք
1870	(Կուտէլ)	Փրէթ	Ն. Կտակարան
1878	Մասնախումբ		Ս. Գիրք
1885	(Մասնախումբի թարգմ.)	Մասնախումբ	Ս. Գիրք
		Կ. Պոլիս	Ֆ. Լ. ՄԷԲԱԼԸՄ

ՊԱՐԻԿԻՆ ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ՆՈՒԷՐԸ

Օր մը, մինչ Յովհան և Ֆիլիպ անուն երկու մանուկներ կը խաղային, յան-

կարծ պարիկ մը երեան գալով անոնց ըսաւ. «Ես զրկուեցայ մէկ մէկ հատ Նոր Տարիի նուէր տալու ձեզի»: Եւ անոնց մէկ մէկ հատ ծրար տալէ վերջ ահն-

թարթի մը մէջ անյայտացաւ: Մանուկները ծրարները բացին և անոնց մէջ երկու գիրքեր գտան, ձիւնի պէս ճերմակ մաքուր և փայլուն էջերով: Երկար ատեն մը ետքը պարիկը դարձեալ եկաւ: «Ձեզի համար մէկ մէկ հատ նոր գիրք ալ բերի», ըսաւ ան, «բայց հինները պիտի առնեմ ու զանոնք զրկողին պիտի տանիմ»: «Արդեօք թոյլադրելի չէ՞ որ զայն ատեն մ'ալ քովս պահեմ, հազիւ վերջին օրերուն անոր նայելու առիթը ունեցայ. սա բաց եղող վերջին էջին վրայ կ'ուզեմ կարգ մը բաներ նկարել», ըսաւ Ֆիլիփ:

«Ոչ», պատասխանեց պարիկը, «պէտք է զայն իր եղած վիճակին մէջ տանիմ»: Իսկ Յովնան ըսաւ. «Շատ կը փափաքէի անգամ մ'ալ նայիլ անոր. քանզի ամէն նայուածքիս անոր մէկ էջը միայն կրցայ տեսնել. երբ մէկ էջը կը դարձնէի միւսը անոր այնչափ փակած կ'ըլլար որ մէկ անգամէն անկարելի կ'ըլլար մէկէ աւելի էջերուն նայիլ»:

Ասոր վրայ պարիկը՝ «Հիմա պիտի կրնաք ձեր գիրքերուն նայիլ» ըսաւ, ու փոքր արծաթէ ճրագ մը վառեց որուն լոյսով մէկիկ մէկիկ էջերը դարձուց եւ զանոնք մանուկներուն ցուցուց: Մանուկները ապշած մնացին: Կարելի՞ է որ ասոնք մէկ տարի առաջ պարիկին տուած գիրքերը ըլլային: Ո՞ր են այդ ձիւնի պէս ճերմակ էջերը: Հոս տփու, սեւ բիծերով, քերուած էջ մը կար. անոր ճիշդ ետեւի էջին վրայ գէշ եւ փոքր պատկեր մը գծուած էր: Կարգ մը էջերը դարգարուած էին ոսկեգոյն և արծաթագոյն փայլուն ներկերով: Ուրիշներուն մէջ գեղեցիկ ծաղիկներ նկարուած էին, իսկ ոմանց մէջ շատ նուրբ և սիրուն ծիածաններ գծագրուած էին: Բայց շատերուն մէջ սեւ բիծեր և գիծեր կը տեսնուէին:

Վերջապէս Ֆիլիփ եւ Յովհան պարիկին երեսը նայեցան և ըսին. «Ասոնք ո՞վ

չինած է. մեր բացած ատենը բոլոր էջերը մաքուր էին, իսկ հիմա բոլոր գրքին մէջ պարապ էջ մ'իսկ չի տեսնուիր»:

Պարիկը ժպտով մը անոնց նայեցաւ և ըսաւ. «Ձեզի բացատրեմ զայն», եւ ապա Ֆիլիփի դառնալով շարունակեց. «Նայէ՛ Ֆիլիփ, երբ դուն երախային (Արամին) թոյլատրեցիր որ ան քու խաղալիքներդ առնէ այս էջին մէջ ծաղիկներ բացուեցան. և եթէ անցեալ օր փոխանակ կուռելու՝ քաղցրաբարոյ ըլլալու չի ջանայիր, այս պտուղի սիրուն թուռներ, որ իր բոլոր ուժովը երգել կը թուի, երբեք պիտի չտեսնուէր այս էջին վրայ»:

«Հապա այս ծաղիկներուն պատճառը ի՞նչ է», հարցուց Ֆիլիփ, որուն տխուր կերպով սապէս պատասխանեց պարիկը. «Այս բիծը հոս դրուեցաւ երբ օր մը դուն սուտ խօսեցար, այդ բիծը յառաջ եկաւ երբ օր մը մայրիկին անհնազանդ գլուխուեցար: Սա տգեղ բիծերն ու գիծերը, որոնք ձեր երկուքին ալ գրքերուն մէջ կը գտնուին, արդիւնքն են ձեր ծննդներուն եւ ուսուցիչներուն հանդէպ ձեր անհնազանդ և անյարգալիք վարմունքին: Բոլոր գեղեցիկ բաները ձեր բարի եղած ատեն, և բոլոր բիծերը ձեր չար գտնուած ատենը յառաջ եկան»:

«Շատ կը փափաքէիք այդ գիրքերը երկրորդ անգամ մեր քովը ունենալ», ըսին պատիկները, որոնց Պարիկը պատասխանեց. «Ատրկա անկարելի է. նայեցէ՛ք, անոնց վրայ 1929 գրուած է. եւ անոնք հիմա սնպատճառ զանոնք ձեզի զրկողին պէտք է երթան: Բայց ձեզի մէկ մէկ հատ նոր գիրքեր բերի, որոնց մէջ նախկիններէն տակի լաւ կրնաք գըրել»: Ու Պարիկը անմիջապէս տնհետացաւ: Մանուկները առանձին մնացեր էին. բայց ամէն մէկը իր ձեռքը առաջին էջը բաց մէյմէկ հատ գիրք բռնած էր որուն կողքին վրայ «1930» գրուած էր:

Կ. ԳՐԴՐԻ ԵՍՇՍԱՐԵՍՆ

ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԿԵԱՆՔ

**ՋԱՆԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ՊԵՏՐՈՒԹԻ ՄԷՋ**

Անցեալին՝ եկեղեցին իր ամբողջ ուժը և ուշադրութիւնը կեդրոնացուցած է չափահասներու վրայ և շատ քիչ ժամանակ յատկացուցեր է երիտասարդութեան։ Բայց հիմայ ժամանակները փոխուած են. ուրախ ենք որ Քրիստոսի եկեղեցին ամենուրեք արթնցած է և ջանք ու զոհողութիւն չի խնայեր իր վաղուան եկեղեցին կազմելիք տարրերու պատրաստութեան համար։

Այս տեսութեամբ է որ մենք կը շնորհաւորենք Պէյրութի Աւետարանական համայնքը որ նկատի առնելով այս գործին կենսական և ածմէական կարեւորութիւնը մինչև իսկ մասնաւոր պաշտօնեայ մը, Պատ. Յ. Աբգարեանը, այս կարեւոր գործը կազմակերպելու և առաջնորդելու հրաւիրեց. և արդէն քանի մը ամսուան արդիւնքը լաւ ապացոյց մըն է կատարուող գործին անհրաժեշտութեան և օգտակարութեան։ Պէյրութի երկու եկեղեցիներուն մէջ զատ զատ թէ տղոց և թէ աղջկանց Ջանասիրաց ընկերութիւններ կազմակերպուած են և բեղմնաւոր գործունէութեան մը շրջանին մէջ կը գտնուին։ Իրենց թիւը ամէն շաբաթ կ'աճի։ Ամէն շաբաթ մասնաւոր կարգադրութեամբ դասախօսութիւններ և նուիրման ժողովներ, պարբերաբար պտոյտներ և ընկերային հաւաքոյթներ տեղի կ'ունենան։ Տղաքն ու աղջիկները իրենց բաժինը կը բերին ժողովներուն և յօժարակամ կը կատարեն իրենց վրայ դրուած պարտականութիւնները։

Նոր Անդամներու Ընդունելութեան Հանդես

Այս նոր տարուան Յունվար 12ին Պէյրութի բոլոր Ջանասիրաց ընկերութիւնները միացեալ ժողով մը ունեցան Ջանասիրացի նոր անդամները ընդուն-

ելու։ Ժողովը տեղի ունեցաւ քաղաքի Հայ Աւետ. եկեղեցին մէջ և կազմակերպուած էր Տեղական Միութեան կողմէ և Պատ. Յ. Աբգարեանի ջանքերով։ Ժողովը լաւ կազմակերպուած և տպաւորիչ էր. յայտագիրը լուրջ և ներուժ։ Բոլոր յայտագիրը մեքենագրուած և բաժնուած էր ներկաներու որպէսզի ամէն ոք կարենայ մասնակցիլ պաշտամունքին։ Ժողովը բացուեցաւ փառաբանութեան երգով որ յօտնկայս երգուեցաւ բոլորին կողմէ որմէ, յետոյ Սբ. Գիրքէն մասնաւոր ընտրուած համարներ կարդացուեցան փոխառացութեամբ։ Քաղաքի Ջանասիրացի երգչախումբը երգեց Սուրբ Սուրբը, և յետոյ ամէնքս միաբերան Ջանասիրացի Հաւատոյ հանգանակը կարդացինք։

Երգ մը եւս երգուելէն յետոյ երկուսեւէ 58 նոր անդամներուն հանդիսաւոր ընդունելութիւնը տեղի ունեցաւ։ Առաջնորդը նախ կարդաց նորագիր անդամներուն անունները որոնք ոտքի կանգնեցան, եւ ի զիմաց անոնց կարգաց նաև հետեւեալ ուխտը։

ՈՒՒՏ

Տէր Յիսուս Քրիստոսի փրկարար ուժին վստահելով կը խոստանամ հետեւիլ իրեն եւ իմ կեանքս աւ կարողութիւններս նուիրել իրեն եւ իր եկեղեցիին սուրբ ծառայութեան։ Կը խոստանամ իրական ներքին հաղորդակցութիւն ունենալ իրեն հետ եւ միութեան ու համերաշխութեան հոգին իր հետեւորդներուն հետ, որոնք իր եկեղեցին կը կազմեն։ Կը խոստանամ հաւատարմօրէն կատարել Ընկերութեանս Սուրբ Գիրք կարդալու եւ աղօթելու համար վրաս դրած պարտականութիւնները, մասնակցիլ Ընկերութեանս բոլոր ժողովներուն, աշխատիլ եկեղեցւոյս յառաջացման եւ բարի վարմունքովս ուրիշներուն օրինակ ըլլալ իբր կենդանի վկայ մը . . .

Ուխտի՛ ընթերցումէն յետոյ նորա-
գիր անդամները իրենց աջ ձեռքերը վեր
վերցնելով հաւանութիւն յայտնեցին
ուխտի արամադրութիւններուն եւ նոյն
պահուն Պէյրութի Զանաւիրաց Ընկե-
րութեանց չորս վարչութիւնները ոտքի
կանգնեցան այս նորագիրները ընդու-
նելու։ Եւ բոլոր նախկին անդամները
հետեւեալ քաջալերական խօսքերը կար-
դային նորերուն ուղղութեամբ։

ՔԱՋԱԼԵՐԱԿԱՆ ԽՕՍԻ

Քրիստոսի եւ իր եկեղեցիին ծառա-
յութեան համար ուխտելով բարի եկաք
մեր մէջ, այս վսեմ եւ նուիրական աս-
պարէզին իբր ուխտեալ զինուորներ եւ
հաւատարիմ գործակիցներ։ Մեր ճամ-
բան միշտ զիւրին եւ հեշտ պիտի չըլ-
լայ, որովհետեւ մեր նշանաբանը, որուն
լաւագոյն ըլլալուն վստահ ենք, ծառա-
յութեան, գոհողութեան եւ համբերու-
թեան հոգին կը պահանջէ։ Թէեւ մեր
ճամբուն վերեւ երկինքը միշտ պայծառ
եւ անամպ պիտի չըլլայ եւ ոչ ալ մեր ու-
ղին ծաղկազարդ, բայց մեր գործը միշտ
հաճելի պիտի ըլլայ։ Որովհետեւ մեր
երկնաւոր Հայրը ամէն օրուան գործին
համար զօրութիւն, ամէն զժողովու-
թեան համար զիւրութիւն, աշխատան-
քին հանգիստ, ճամբուն համար լոյս եւ
շնորհք, ձախորդութեանց համար յոյս եւ
հաւատք, անվերջ օգնութիւն, անհատ-
նում ողորմութիւն, եւ անսահման սէր
խոստացած է։ Մենք ալ կը խոստա-
նանք ձեզի իրական բարեկամութիւն մը
եւ կ'ուխտենք ըլլալ հաւատարիմ ճամ-
բու ընկերներ ձեզի. եւ մեր համեստ ձիւ-
քերը ձերինն հետ կը միացնենք ի նը-
պաստ ճշմարտութեան, արդարութեան
եւ սիրոյ յաղթանակին եւ կը նուիրենք
Քրիստոսի եւ իր եկեղեցիին լաւագոյն
ծառայութեան։»

Այս խօսքերու ընթերցումէն յետոյ
առաջնորդը կարդաց նաեւ հետեւեալ վը-
տահութեան պատգամը Ս. Գիրքէն. —

«Տէրը պիտի կատարէ ձեզի համար
իր սկսածը. ինչու որ Աստուած է որ ձեր
մէջը կը ներգործէ կամենալը ու ընելը
իր հաճութեան համար։ Անիկա հաւա-
տարի՛ է իր խոստումներուն մէջ եւ կա-
րող է առատութեամբ ընել ամէն բանէն
աւելի որ մենք կը խնդրենք կամ կը խոր-
հինք. ան գօրութիւնովը որ մեր մէջը կը
ներգործուի իրեն փառք եկեղեցիին մէջ
Քրիստոս Յիսուսով՝ բոլոր դարերու մէջ
յաւիտեանս յաւիտենից Ամէն։»

Ասկից յետոյ ամէնքս ստքի վրայ եր-
գեցինք հետեւեալ երգը որ Անգլերենէ
պատշաճեցուցած էր Պր. Պետրոս Յակոբ-
եան. —

Ինչպէս որ եմ, ինչ որ ունիմ,

Քեզ նախիրեմ սիրուն Տէր իմ,

Զիս կըսիրես կը վստահիմ

Անոր համար Քեզի կուգամ։

Կեանքի գարունն նոր ողջունած,

Զիրքերս բոլոր Քեզ Տէր Աստուած.

Ուխտել հիմա եւ հանապազ,

Բոլոր սրտով Քեզի կուգամ։

Կուգեմ ապրիլ լոյսով գեղուն

Որ փայլի միշտ ուրիշներուն,

Ծառայել Քեզ սիրով եռուն

Յոժարակամ՝ Քեզի կուգամ։

Ազատ, անվախ, մինչեւ վախճան,

Կաւաղոյնս՝ ճշմարտութեան,

Իրաւունքի, արդարութեան

Ընծայելով՝ Քեզի կուգամ։

Այս պահուն խօսք տրուեցաւ Պր.
Պետրոս Յակոբեանի օրուան պատգամը
տալու։ Յարգելի բանախօսը նիւթ առ-
նելով Զանաւիրացի խորհրդանշանը
«Քրիստոսին եւ եկեղեցիին համար», ջա-
նաց ցուցնել թէ աշխարհի ամէնէն մեծ
պէտքը Յիսուսին է. թէ ազգերը եւ ան-
հատները Անոր հոգիին պէտքն ունին.
մինչեւ իսկ ո՛չ Քրիստոնեայ ազգեր Անոր
ազգեցութենէն չեն խրաչիր եւ կը փա-

փաքին Զինք ունենալ: Յետոյ բացա-
տրեց թէ աշխարհ նմանապէս պէտքն
ունի Եկեղեցիին: Ան ըստ որ աշխարհի
մէջ չափէն աւելի կազմակերպութիւններ
և հաստատութիւններ կան երփնէրանդ
անուններով: Բայց եկեղեցին դարերէ
ի վեր այն միակ զործօն կազմակերպու-
թիւնն է որ ապրած է և գործ մը ունի
ընելիք աշխարհի վրայ: Բայց թէ Քրիս-
տոս և Եկեղեցին նուիրուած երկասարդ
ոյժերու պէտքն ունին ապրելու և գործե-
լու: Յետոյ քանի մը շնորհաւորական
խօսքերէ յետոյ մէջքերեց Պօղոս Առաք-
եալի Հռոմի եկեղեցիին ուղղած հետեւե-
ալ խօսքերը:—

«Ո՞ր պիտի գատէ մեզ Քրիստոսի սէ-
րէն. տառապանքը կամ նեղութիւնը
կամ հալածանքը, կամ սովը, կամ վը-
տանգը, կամ սուրը վասնզի ես
հաստատ զիտեմ որ ո՛չ մահը և ո՛չ կեան-
քը, ո՛չ իշխանութիւնները ու ո՛չ գորու-
թիւնները . . . և ո՛չ ուրիշ արարած մը
կրնայ մեզ գատել Աստուծոյ սէրէն որ
Քրիստոս Յիսուս մեր Տէրօջմով է »:

Եւ աւելցուց: Այս բաները չի կրցան
Հռոմի եկեղեցին գատել իրենց Աստուծ-
մէն և գուցէ ասոնք մեզ ալ չեն կրնար
գատել մեր սիրած Քրիստոսէն և իր եկե-
ղեցիէն: Բայց կան ուրիշ ազդակներ և
քօղարկում Վտանգներ որոնք կրնան
մեզ գատել Քրիստոսէն և իր եկեղեցիէն
և ասոնք են,—հաճոյամուծութիւն, եսա-
սիրութիւն, անձնապատանութիւն,
նիւթապաշտութիւն և վախկոտութիւն.
և կոչ ըրաւ բոլորին որ հաւատարիմ
մնան իրենց ուխտին որ յետաջտու ոչ մէկ
բան կարենայ գատել զիրենք Քրիստո-
սէն և իր եկեղեցիէն և Պօղոս Առաքեալի
Հռոմի եկեղեցիին ուղղած «վասնզի ես
հաստատ զիտեմ» ը ձեզի ալ կարենայ
ուղղուիլ այս երկու եկեղեցիներու պի-
տերուն կողմանէ, և առաւելապէս ձեր
ալ կողմանէ թէ զուք ալ հաստատ զի-
տէք որ ոչ մէկ բան աշխարհի վրայ յետ

այսու ձեզ պիտի կարենայ գատել Քրիս-
տոսէն և իր եկեղեցիէն »:

Առաջնորդին քանի մը յորդորական
խօսքերէ յետոյ այս շատ տպաւորիչ հան-
դէսը փակուեցաւ քաղաքի Զանաթրա-
ցի երգիչ խումբին կողմանէ երգուած
«Ամէն Հայր Սուրբ» ով. և ներկանե-
րը Վեր. Կէօքկէօզեանի օրհնութիւնով
գատուեցան իրարմէ տանելով իրենց հե-
տիստ հաճելի տպաւորութիւններ:

ԶԱՆԱՍԻՐԱՅԻ ԲԱՐԵԿԱՄ ՄԸ

ՔիՍԱՊԼԱՆ կը գրուի թէ զպրոցի շէն-
քը, որ իբրեւ եկեղեցիի սրահ ալ կը
ծառայէ, նորոգութեան մէջ է տանէ
միլիոն: Առաստաղի նորոգութիւնը լը-
մնցած է, բայց տակաւին նախկին վի-
ճակին մէջ կը մնայ յատակը, զոր տախ-
տակով ծածկելու համար 25, իսկ չի-
մէնթով ծածկելու համար 45 օսմ. օսկի
ծախք կը նախատեսուի: Յարգ ծախ-
սուած է 120 օսկի:

ՊիթիԱՍէն Վեր. Տ. Անդրէասեան
կը գրէ որ եկեղեցին վերակազմելու
գործը յառաջ կը տարուի արդիւնաւոր
կերպով: Լուծեալ Զանից Ընկերու-
թիւններէն Աղջկանց Բաժինը վերակազ-
մուած է: Եօղուն-Օլուզի մէջ Պր.
Թիւքիեանի անձնաւորութիւնը և ծա-
ռայութիւնը մեծապէս գնահատուած է
ժողովուրդէն:

ՊէՅԼԱՆէն կը գրուի թէ Ֆարթըսլիի
քարոզիչը Պատ. Կ. Ալթունճեան Պէլա-
նի մէջ իր կարճ ծառայութեան միջոցին
սիրելի դարձեր է անխտիր բոլոր Հայ-
րուն: Այս աչազարկ քարոզիչը, հմուտ
Առաք. եկեղեցիին բոլոր շարականե-
րուն, իր գեղեցիկ ձայնով կ'երգէ գա-
նոնք՝ ուրախութիւն և սփոփանք պատ-
ճառելով ամէնուն:

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷՋԸ

ԾՆՈՒՆԴԻ ԵՐԳԸ

Ազգայնագետ Զարյա Տիգրանի
գրաւածներէն

ԳԼՈՒԽ Բ.

ԵՐԵՎ ՈՒՆԵՐՈՒՆ ԱՌԱՋԻՆԸ

Ու մթութիւն մը պատեց ամէն կողմ։ Ոչ ինչ կը լսուէր։ Ու կարծես թէ մշուշին մէջէն կը ծագէր առաւօտը, աստիճանաբար սկսաւ տեսնուիլ նոր տեսարան մը. — Սքրուճ դարձեալ կը տեսնէր իր անձը, բայց այս անգամ աւելի տալեց, իր գէտքը հոգերու ու մտածումներու խորշումները ցոյց կուտար, անհանգիստ էր, աչքերուն մէջ ագահութեան բոցը կ'երեւէր։ Առանձին չէր, իր քով նստած էր սգաւորի զգեստներ հագած գեւատի օրիորդ մը, որուն աչքերը արցունքով էին։

Այո, իր քով նստող աղջիկը սգաւորի հագուստ հագած էր, անիկայ մեղմ ու տխուր ձայնով մը ըսաւ. «Քեզի համար շատ քիչ տարբերութիւն կ'ընէ, իմ տեղըս ուրիշ բանի մը յատկացուցիր, հիմայ ուրիշ կուռք մը ունիս. և եթէ ապագային ատիկայ իմ տեղս քեզ կը մըխիթարէ ու կ'երջանկացնէ, ես շատ վշտանալու պատճառ մը չունիմ։»

— Ի՞նչ կուռք, հարցուց Սքրուճ։

«Ոսկին, զրամը։»

— Բայց չէ՞ որ աշխարհի ընթացքը այդ կը պահանջէ, պատառխանեց ըՍքրուճ, աղքատութեան չափ անտանելի բան չկայ, և աղքատութենէ ազատելու ամէնէն լաւ միջոցը զրամ գիւղին է։»

«Քիչ մը չափէն աւելի կը խորհիս զրամը մասին. անոր գաղափարովը այնքան զրաւուած է սիրտդ, որ ալ ինծի համար հոն տեղ չէ մնացած. ըսէ, կ'աղաչեմ, այնպէս չէ։»

— Ատկէ ի՞նչ կ'ելլէ, աւելի խելացի

ըլլալուս մէջ ի՞նչ փնտս կայ, մանաւանդ քեզի համար։ Ո՞վ կ'ըսէ թէ քեզի հանդէպ ալ զգացումներս փոխուած են։

Օրիորդը իր գլուխը շարժեց և մեղմիւ ըսաւ. «Մենք նշանուած ատեն՝ աղքատ էինք, այն ատեն գու ուրիշ մարդ մ'էիր, իսկ հիմայ բոլորովին փոխուած ես։»

— Այն ատեն մանուկ էի տակաւին։

«Այո՛, նայնիսի քու զգացումներդ քեզի կ'ըսեն թէ դուն միեւնոյն անձը չես այժմ, փոխուած ես։ Իսկ զալով ինծի՝ ես նոյնն եմ, և այն նշանաւորը որ երջանկութիւն կը խոստանար երբ մենք մէկ էինք սրտով, թշուառութիւն պիտի ըլլայ այսուհետեւ քանի որ երկուք ենք այժմ։ Ուստի, փոխանակ իմ հետ թշուառ ըլլալու, կրնաս զատուիլ ինձմէ ու երջանիկ ըլլալ, ազատ ես այսուհետեւ։»

— Միթէ իմ բերնէս ատանկ բան մը լսեցի՞ր մինչեւ այսօր։

«Ոչ, այդ բառը՝ ոչ։»

— Հապա ի՞նչ։

«Ես ատիկայ քու փոխուած բնութեանդ մէջ կը տեսնեմ. ըսէ խնդրեմ, եթէ այսօր ազատ կամքովդ ընտրութիւն մը ընել հարկ ըլլար միթէ ինծի պէս աղքատ մէկը կ'ընտրէի՞ր։»

— Սքրուճ լռեց, ու վար նայեցաւ։

«Աստուած գիտէ որ ես եմ զգացմանցըս մէջ սխալած ըլլալս եթէ տեսնէի, շատ ուրախ պիտի ըլլայի, բայց գիտեմ թէ սխալած չեմ։ Դուն գուցէ ինձմէ բաժնուելովդ քիչ մը տրամիս բայց շատ շուտով պիտի մոռնաս ատ ամէնը, որ երազի նման պիտի ցնդին։ Ուստի, մընաս բարեաւ, կը մաղթեմ որ երջանիկ ըլլաս քու ընտրած նոր կեանքիդ մէջ։»

Ու աղջիկը զայն թողելով մեկնեցաւ։

(Շարունակելի) (13)

صاحب الامتياز و مدير المسئول

قسيس قريه بت هاروتونيان